հրդով Հ.Ադգ.Խորհրդի ներկայացուցիչներ Օհանջանեանն ու Զոհրաբեանը որոշեցին մեկնել Բերլին. Ֆոն Լոսովը խոստացաւ տանել իր նաւով, վրաց ներկայացուցիչների հետ միասին, Փոթիից:

Մայիս 25-ին զերման պատւիրակութիւնը հեռացաւ Բաթումից, իսկ միւս օրը, մայիս 26-ի երեկոյեան ժամը 8-ին օսմանեան պատւիրակութիւնը անդրկ. պատւիրակութեան յանձնեց հետեւեալ վերջնագիրը.

Անդրկովկասեան պատւիրակութեան նախագահին.

Յաւով հաստատում եմ, որ տակաւին ոչ մի որոշ պատասխան չի տրուած այն առաջարկութիւններին, որ ես պատիւ ունեցայ օսմանեան կայսերական կառավարութեան կողմից յանձնելու Անդրկովկասեան Դաշնակցական Հանրապետութեան պատւիրակութեան Բաթումի խորհրդաժողովի առաջին նիստում, մայիս 11-ին, չնայած որ բաւական երկար ժամանակ, այսինքն՝ երկու շաբաթ է անցել այն օրից, երբ նրանք ձեւակերպուեցին: Մինչդեռ, ինչպէս յայտնի է ձերդ գերազանցութեան, Կովկասի վիճակը աւելի քան տագնապալի է ու երկդիմի և առանց յապաղելու պէտք է լուսաբանուի:

Հարիւր հազարաւոր թուրքեր և մահմեդականներ Բաղում ու շրջակայքում տառապում են անխիղճ հրոսակների, այսպէս կոչուած յեղափոխականների արիւնոտ լծից, և անուղղելի աղէտը, որ սպառնում է այդ դժբախտներին, դառնում է աւելի ու աւելի անխուսափելի: Թուրք և մահմեդական բնակիչների ճակատագիրը Կովկասի միւս մասերում էլ, ուր թալանչիների ու չարագործների բազմաթիւ կազմակերպուած հրոսախմբեր նրան պատճառում են անվերջ ու յարաճուն կերպով ամէն կարգի բռնութիւններ, աւելի հանգստացնող չէ ու չի կարող չհրաւիրել ամենալուրջ ուշադրութիւն: Դուք կընդունէք, սակայն, պ.նախագահ, որ այդ անունին արժանի և ո՛չ մի կառավարութիւն չի կարող դիտել անտարբեր աչքով, որ իր երկրին սահմանակից մի հողի վրա անպատիժ կերպով աճեն նման ոճրագործութիւններ, և կը դիտակցէք, անշուշտ, որ օսմանեան կայսերական կառավարութեան դրութիւնը առանձնապէս փափուկ է Կովկասը ծուռող անիշխանութեան հանդէպ, որովհետեւ այդ վերաբերում է նոյնպէս և առաւելաբար ապահովութիւնը մի ազգաբնակութեան, որ ցեղի ու կրօնի ամենասերտ ազգակցութիւնն ունի կայսրութեան բնակչութեան հետ: Միւս կողմից, ընդհանուր պատերազմի անխուսափելի պահանջները կայսերական կառավարութիւնը դնում են Կովկասի վրայով, երկաթուղիներով, ըստ կարելւոյն շուտ, դէպի պատերազմի ուրիշ ռազմաբեմ զօրքի ազատ փոխադրութիւնը ապահովելու անհրաժեշտութեան առջև: Այդ ևս պահանջում է, որ անյապաղ վերջ տրւի ներկայ երկդիմի կացութեան:

Այս բոլոր պատճառներով, օսմանեան կայսերական պատւիրակութիւնը պարտք է համարում պահանջել, որ անմիջապէս հաղորդւի իրեն անդրկովկասեան պատւիրակութեան պատասխանը առաջ արուած առաջարկութիւններին, այլ և սահմանների սրբագրութեան վերաբերող նոր առաջարկին, որի բնագիրը պատիւ ունեցայ ընդ սմին ուղարկելու ձերդ գերազանցութեան:

Այսպիսով, իմ կառավարութիւնը՝ ընդունելով, որ միայն վերոյիշեալ առաջարկութիւնների ճշտիւ և արագ ընդունումը Անդրկովկասեան Դաշնակցական Հանրապետութեան կառավարութեան կողմից կարող է Կովկասը հասցնել գոհացուցիչ դրութեան և որ միայն այդ ընդունումը ի վիճակի է ստեղծել կայուն դրութիւն և համարւում է բաւարար երաշխիք թուրք և մահմեդական բնակչութեան ապահովութեան և անդորրութեան համար, —